ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Վայոց Ձորի մարզ, Վայք համայնք, Զառիթափ բնակավայր

06.06.2025թ.

Ս/թ. հունիսի 6-ին, ժամը 13:00-ին ՀՀ Վայոց ձորի մարզի Վայք համայնքի Զառիթափ բնակավայրի վարչական շենքում տեղի ունեցավ «Վայք գոլդ ռիսորսիզ» ՍՊԸ-ի նախաձեռնած ՀՀ Վայոց ձորի մարզի Ազատեկի ոսկի-բազմամետաղային հանքավայրի վերագնահատողական երկրաբանահետախուզական աշխատանքների իրականացման թույլտվություն ստանալու համար անհրաժեշտ փաթեթի վերաբերյալ հանրային լսումը (առաջին):

Հանրային լսմանը մասնակցում էին Զառիթափ բնակավայրի վարչական ղեկավար Մ. Մուրադյանը, Վայքի համայնքապետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ Գ. Գևորգյանը, «Վայք գոլդ ռիսորսիզ» ՍՊԸ-ի տնօրեն Ա. Թավազյանը, «Գեոէկոնոմիկա» ՓԲԸ-ի գլխավոր տնօրեն Ա. Բաղդասարյանը և գլխավոր տնօրենի տեղակալ Ռ. Քոչարյանը, ինչպես նաև համայնքի բնակիչները (մասնակիցների ցանկը կցվում է):

Վարչական ղեկավարը ողջունեց ներկաներին և խոսքը փոխանցեց Ա. Բաղդասարյանին.

Արամ Բաղդասարյանը ելույթ ունեցավ հետևյալ խոսքով:

Ես Արամ Բաղդասարյանն եմ, Գեոէկոնոմիկա ՓԲԸ-ի՝ նախագծող կազմակերպության գլխավոր տնօրենը: Այս հանրային քննարկման նպատակն է ներկայացնել ձեզ Ազատեկի ոսկու հանքային դաշտում «Վայք գոլդ ռիսորսիզ» ՍՊԸ-ի կողմից նախաձեռնվող երկրաբանական ուսումնասիրությունների ծրագիրը:

Հանքավայրի տարածքը բաղկացած է երկու տեղամասից՝ աջափնյա և ձախափնյա: Աջափնյա տեղամասն ունի մոտ 346 հա մակերես, աջափնյան՝ մոտ 98 հա:

Երկրաբանական ուսումնասիրությունների ծրագրով դաշտային պայմաններում նախատեսվում է իրականացնել.

- երկրաբանական հանույթ 1:2000 մասշտաբի,
- հորատանցքերի մեխ. սյունակային հորատում,
- հորատահանուկային նմուշարկում,

կությունների որոշում,

- տեղագրամարկշեյդերական աշխատանքներ,

Շրջակա միջավայրի բաղադրիչների վրա վնասակար ազդեցության մեղմացման վերացման նպատակով նախատեսվում են հետևյալ բնապահպանական միջոցառումները.

- մեքենաների տեխնիկական սպասարկման իրականացում՝ մասնագիտացված ընկերությունների տարածքում, որտեղ առկա են բոլոր անհրաժեշտ պայմանները յուղերի, քսայուղերի փոխարինման, պահպանման և պահեստավորման համար,

- կենցաղային աղբի հավաքում հատուկ անթափանց տարրաների մեջ և հետագա տեղափոխում մոտակա կազմակերպված աղբավայր, աղբահանության նպատակով համապատասխան ծառայությունների հետ նախատեսվում է կնքել պայմանագիր և կատարել համապատասխան վճարումները:

- կեղտաջրերի հավաքում բետոնապատ հորատիպ զուգարանում, որը պարբերաբար նախատեսվում է դատարկել հատուկ ծառայության ուժերով: Աշխատանքների ավարտից հետո դատարկված փոսը կլցվի քարերով, կծածկվի հողի շերտով,

- աշխատող մեքենայի շարժիչի կարգավորում՝ աղմուկի մակարդակի կարգավորման և կենդանական աշխարհի վրա բացասական ազդեցության նվազեցման նպատակով:

- տեղամասին մոտեցնող ճանապարհի ինտենսիվ ջրում տարվա չոր և շոգ եղանակներին, հորատման հաստոցի հենք հանդիսացող մեքենայի տեղաշարժի ժամանակ, հորատման հարթակների տարածքի խոնավեցում՝ փոշեգոյացումը բացառելու նպա-տակով:

- խախտված տարածքների ռեկուլտիվացիա՝ երկրաբանահետախուզական աշխատանքների ավարտից հետո:

Բաղդասարյանը ներկայացրեց նաև որոշ տվյալներ ապագայում հանքավայրի շահագործման և հարստացման ֆաբրիկայի վերաբերյալ, նշելով, որ այն շահագործվելու է բացառապես ստորգետնյա եղանակով, ինչը բնապահպանական տեսանկյունից ունի մեծ առավելություններ:

Ելույթ ունեցան հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչները, ովքեր նշեցին հանքավայրերի շահագործման արդյունքում առաջացող բացասական երևույթները՝ ըստ իրենց, և նույնիսկ կարծիք հայտնեցին ընկերության թուրքական ծագման մասին, որից հետո թեժ բանավեճ ծավալվեց նրանց և համայնքի բնակիչների մեջ, ովքեր պնդում էին, որ համայնքն

ունի ներդրումների, աջակցությունների և աշխատատեղերի կարիք և այլ մարդիկ իրավունք չունեն նպատակային ապակողմնորոշել իրենց՝ համայնքի բնակիչներին:

Ա. Բաղդասարյանը նշեց ներդրվող սոցիալական վճարումների մասին, որը ներառում է հուշագրի կնքում՝ համայնքում առկա խնդիրների լուծման համար, պետական բյուջե վճարումների իրականացում և այլն:

Ամեն դեպքում. բնակիչներն ունեին որոշակի մտահոգություններ ռադիացիայի, ճառագայթման և այլ բնապահպանական ռիսկերի վերաբերյալ, սակայն նախագծող և ձեռնարկող կազմակերպությունները վստահեցրին, որ իրականացվելու են չափումներ, կատարավելու են մշտադիտարկումներ, որոնք փարձաքննվելու են պետական մարմինների կողմից և ռիսկայնության դեպքում դադարեցվելու են աշխատանքները:

Վերջում «Համայնքային համախմբման և աջակցության կենտրոն» ՀԿ նախագահ Օլեգ Դուլգարյանը փորձեց բոյկոտել հանրային լսումը, փորձելով այն չեղյալ հայտարարել, սակայն բնակիչները դժգոհություններ չունեին դրա հետ կապված, ուստի ստորագրեցին մասնակիցների ցանկը և հանրային լսումը համարվեց կայացած:

Պատասխանատու՝ Վայքի համայնքապետարանի աշխատակազմի՝ գյուղատնտեսության և
բնապահպանության բաժնի Գ. Գևորգյան

«Վայք գոլդ ռիսորսիզ» ՍՊԸ-ի տնօրեն՝ Ա. Թավադյան

ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ

Անուն, ազգանուն	ստորագրություն	Հեռ.
[illegible]		077-35-92-92
[illegible]		093-01-45-50
[illegible]		
[illegible]		098882473
[illegible]		077774007
[illegible]		098422821
[illegible]		077323266
[illegible]		098332868
[illegible]		
[illegible]		094015533
[illegible]		094015584
[illegible]		
[illegible]		
[illegible]		
[illegible]		098880045
[illegible]		099225525
[illegible]		094016621
[illegible]		
[illegible]		098985583
[illegible]		098403021
[illegible]		098226051
[illegible]		
[illegible]		
[illegible]		
[illegible]		096363337
[illegible]		

ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ

Անուն, ազգանուն	ստորագրություն	Հեռ.
Իրան Մանուկյան		094558188
Արարատ Գրիգորյան		93.88.96.33
Վարդան Գրիգորյան		077959025
Գևորգ Գևորգյան		077519433
Ռազմիկ Գրիգորյան		
Հայկ Հարությունյան		077.17.3222
Արսեն Սարգսյան		077-51.79.96
Դավիթ [illegible]		094226016
Սյուզան [illegible]	[illegible]	
[illegible]		093026696